# ՉՈՐՍ ԳԱՎԱԹՆԵՐ ԵՎ ՉՈՐՍ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

## ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Այս տոնից առաջ հրաեաները պատրաստվում են իրենց տները մաքրելով:

Ելից 12:15 — "Յոթ օր բաղարջ հա՛ց կերեք. հենց առաջին օրը ձեր տներից դո՛ւրս զցեք թթխմորը.

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԵԼԻՑ 6:6-7

**Դրա համար ասա՛ Իսրայելի որդիներին. "Ես եմ Տերը : Ես ձեզ հանելու եմ եգիպտացիների լծի տակից, ձեզ ազատելու եմ նրանց աշխատանքից և ձեզ փրկելու եմ <u>տարածած բազկով</u> ու մեծ դատաստաններով: Եվ ձեզ պիտի դարձնեմ իմ ժողովուրդը, պիտի լինեմ ձեր Աստվածը, և դուք պիտի գիտենաք, որ ես եմ Տերը՝ ձեր Աստվածը, եգիպտացիների ծանր աշխատանքի տակից ձեզ հանողը:**

> **Ելից 12:26-27 — "Եվ երբ պատահի, որ ձեր որդիները հարցնեն ձեզ. "Ի՞նչ է նշանակում ձեր այս պաշտամունքը", այն ժամանակ կպատասխանեք, որ սա զատկի զոհն է Տիրոջ համար, որը Եգիպտոսում Իսրայելի որդիների տների վրայով անցավ եգիպտացիներին հարվածելիս և ազատեց մեր տները»: Ժողովուրդը խոնարհվեց ու երկրպագություն արեց:"**

1. **ՍՐԲԱՑՄԱՆ ԳԱՎԱԹ – THE CUP OF SANCTIFICATION**
   **ԵՍ ՔԵԶ ԴՈՒՐՍ ԿԲԵՐԵՄ – I WILL BRING YOU OUT.**
   ***6 Ես ձեզ հանելու եմ եգիպտացիների <u>բռնությունից</u>. (ծառայությունից)***
   ***I am the Lord, and I will bring you out from under the yoke of the Egyptians.***

   "Պողոսը և Տիմոթեոսը՝ Հիսուս Քրիստոսի ծառաները՝ Քրիստոս Հիսուսով բոլոր սրբերին." Փիլիպպեցիներին 1:1

   "Որովհետև Տիրոջով կանչված ծառան Տիրոջ ազատն է, նույն կերպ էլ իբրև ազատ կանչվածը Քրիստոսի ծառան է:" Ա Կորնթացիներին 7:22

   Ուրեմն մեղքից ազատվելով՝ ծառա դարձաք արդարությանը: Հռոմ. 6:18

   Իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև: Մատթեոս 11:30

   **Այս շաբաթ եկեք կարդանք Ելից 12, Եսայի 53 և Ղուկաս 22**

2. **ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԳԱՎԱԹ — THE CUP OF DELIVERANCE**
   **ԵՍ ԿՓՐԿԵՄ ՔԵԶ – I WILL RESCUE YOU.**
   ***6 Ես ձեզ փրկելու եմ նրանց ծառայելուց.***
   ***I will free you from being slave to them,***

*2 Տիմ. 4:18 - 18* Եւ <u>կ՚փրկէ ինձ Տէրն ամեն չար</u> բանից եւ կ՚ազատէ կ՚հասցնէ իր երկնային արքայությանը. որին լինի փառք հավիտյանս հավիտենից. Ամէն:

Տիտոսին 3:5 — նա ոչ թե ըստ մեր կատարած արդար գործերի մեզ փրկեց, այլ իր ողորմությամբ, վերստին ծննդյան ավազանի միջոցով և Սուրբ Հոգու նորոգությամբ:

3. **ՓՐԿԱԳՆԻ ԲԱԺԱԿ – THE CUP OF REDEMPTION**
   **ԵՍ ՔԵԶ ԵՍ ԿԳՆԵՄ – I WILL REDEEM YOU.**
   *6 ձեզ փրկելու եմ <u>տարածած բազկով</u> ու մեծ դատաստաններով:*
   ***I will redeem you with an outstretched arm and with mighty acts of judgement.***

ԵԼՔ 12:21 — "Մովսեսը կանչեց Իսրայելի բոլոր ծերերին և ասաց նրանց. «Ընտրեք ձեր ընտանիքներին համապատասխան մի գառ, առեք և մորթեք զատիկը:"

ՀՈՎՀ. 1:29 — Հաջորդ օրը Հովհաննեսը տեսավ Հիսուսին, որ գալիս էր իր մոտ, ու ասաց. Ահա Աստծու Գառը, որ իր վրա է վերցնում աշխարհի մեղքը:

Ղուկաս 22:15-20 — Նրանց ասաց. «Շատ ցանկացա իմ չարչարվելուց առաջ այս զատկական ընթրիքը ձեզ հետ ուտել:

ԵՍԱՅԻ 53:5-6 — Բայց նա մեր հանցանքների համար վիրավորվեց և մեր անօրենությունների համար հարվածվեց. պատիժը, որ մեզ բարօրություն բերեց, նրա վրա ընկավ, և նրա վերքերով մենք բժշկվեցինք: Մենք բոլորս մոլորվեցինք ոչխարների պես, յուրաքանչյուրն իր ճանապարհով գնաց, բայց Տերը նրա վրա դրեց մեր բոլորի անօրենությունը:

1 Կոր 6:20 — Դուք մեծ գնով եք գնվել, ուստի փառավորեք Աստծուն ձեր մարմնի մեջ:"

**ՏԵՐԸ ՄԵԶ ՓՐԿԵՑ ԳԱԼԻՔ ԴԱՏԱՍՏԱՆԻՑ ԵՎ ՄԵՂՔԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄՆԻ ՄԵՋ:**

Հռոմեացիներին 8:3 — Աստված հնարավոր դարձրեց՝ ուղարկելով իր Որդուն մեղավոր մարմնի նմանությամբ և մեղքի համար, և մեղքը դատապարտեց այդ մարմնի մեջ.

Հռոմեացիներին 5:9 — Հապա որքա՜ն առավել հիմա, երբ նրա արյունով արդարացած ենք, նրա բարկությունից փրկված կլինենք:"

4. **ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԲԱԺԱԿ – THE CUP OF PRAISE RESTORATION**
   **ԵՍ ՔԵԶ ՎԵՐ ԿԱՌՆԵՄ (ԿՏԱՆԵՄ ...) ԻՆՁ ՄՈՏ – I WILL TAKE YOU... TO ME.**
   *Եվ ձեզ պիտի դարձնեմ իմ ժողովուրդը, պիտի լինեմ ձեր Աստվածը.*
   ***I will take you as my own people, and I will be your God.***

Հով. *14:1-3* — 1 Ձեր սիրտերը թող չխռովեն. Աստուծուն հաւատացէք, եւ ինձ հաւատացէք: 2 Իմ Հօր տանը շատ բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզ կասէի. Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: 3 Եւ եթէ գնամ եւ ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձեալ կգամ եւ ձեզ ինձ մօտ կառնեմ. որ ուր ես եմ, դուք էլ լինիք:

Հովհ. 17:21 — որպեսզի բոլորը մեկ լինեն, ինչպես դու, Հա՛յր, իմ մեջ, և ես՝ քո մեջ. որպեսզի նրանք էլ մեր մեջ լինեն, որպեսզի աշխարհը հավատա, որ դո՛ւ ինձ ուղարկեցիր:”

## ԱՄՓՈՓՈՒՄ

1. *Տերը մեզ աշխարհից դուրս բերեց:*
2. *Տերը մեզ փրկեց:*
3. *Տերը մեզ արդարացրեց:*
4. *Տերը մեզ հավիտենական կյանք խոստացավ:*